

ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

ՕՐԱԳԻՐ

Բ Ա Պ Ա Ք Ա Ա Ա Ն Բ Ա Ն Ա Ա Ր Ր Ա Ա Ա Ա Ե Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Ա Ա Ա

2 ՈՐՐՈՐԻ ՏԱՐԻ .

ԶՄԻՒՌՆԵԱ ՈՒՐԲԱԹ 21 ՅՈՒՆՎԱՐ 1844

Թ Ի Ի 174

ԱՌՔՐԱ ԵՌԻՔԻ

Կոստանդնուպոլիս, 17 Յունիսար :

Քաղաքականութիւնը մեծ հանգարտութեան մէջ է : Օտար տէրութեանց հետ եղած խնդիրներէն միայն պարսից վէճը տակաւին անանկ կախ կրճնայ . որուն վրայօք նոր տեղեկութիւն չունինք , 1 րդրու մէն եկած վերջին լուրերէն 'ի դատ :

—Տարձրագոյն Գուռը աս օրերս Վարձիններուն ու Տիւրքիներուն գործոց կարգադրութեանը վրայօք պարտաւրով , արժան համարեցաւ նոյն կարգադրութիւնը ներկայացնել հինգ մեծ տէրութեանց դէս պաններուն . որոնք ընդհանրապէս հաճութիւն տրւին , քանի մը պղտիկ չարաւորութիւններ սուա ջարկելով : Կառավարութիւնը միտք ունի աս կարգադրական որոշումը անմիջապէս 1 րատ փաշային ծանուցանել , որ շուտով գործքի դրուի :

—Օտմանեան ատմական իշխանները կը շարունակեն միշտ աշխատիլ քաղաքական կառավարութեան վերաբերեալ մէկ նոր կերպ բարեկարգութեան վրայօք , օտար տէրութեանց հպատակներուն համար :

—Ամէն կերպ պատրաստութիւնները արդէն կատարուեցան նոր փողերանոցին մէջ , Վեճազօր արքան արժանաւորութեամբ ընդունելու համար : Կոր ստակը , Կորին Վեճափառութեանը այցելութեանէն ետքը պիտի տարածուի հասարակութեան մէջ : Երդէն կտրուած ստակները խիստ ազւրբ են . չորս շոգեշարժ մասուկայ , որոնք մէկ ժամուն մէջ 4200 կտոր ստակ պիտի հանեն :

—Թաղաւորական հրամանաւ , Գիլիպէի կառավարիչ Օ.Իհիա փաշան իր պաշտօնէն զրկուեցու , ու անոր տեղը Մ.Տառ ազն զրուեցաւ : որ ըմպելեաց վերակացու էր (դէճըիէ էմինի) : Արիւնուալօրոյ նակորդ տէֆթէրտար Միւհիպ էֆէնտին ալ ըմպելեաց վերակացու անուանեցաւ :

—Ռուսիոյ դեսպան Վսեմախայլ մօսիւ տը Գիլգովը , ամբա մը կայ գրեթէ , որ իր քրոջը մեռնելուն դժբաղդ լուրը ընդունել էր . աս օրերս նաև Օտեսայի շոգեհաւով իր հօրը մահուան գուժը ընկալաւ :

—Մեծապատիւ Տէպնէյ Ս . Բէրր Միացեալ Կահանդաց Վեճիդայի դեսպանը անցած հինգշաբթի օրը Բարձրագոյն Գուռը գնաց իր տէրութեան յայտարարական գիրերը մատուցանելու (Վարձրապատիւ Կարաքոսին , ու պաշտօնին վերաբերեալ այցելութիւնը ընելու համար արտաքին գործոց տեսուչ Բիֆաթ փաշային : Հիշեալ երեւելի պաշտօնատարին հետն էին նաև դեսպանատան առաջին թարգման մօսիւ Պրօսենը , և ուրիշ ամէն գործակալները :

—Աստուրիոյ դեսպան Վսեմախայլ Վթիւրմէրի կամը ամսուա 10ին իրիկունը , փառաւոր հանդէս մը կարաւու (սլաթ) ըլլաւ իր պալատը . ուրտեղօտար տէրութեանց դեսպաններէն ու երեւելի գործակալներէն 'ի զատ , ներկայ գանուեցան նաև Բարձրապատիւ ընդհանուր մեծ զօրապետ Բիլա փաշան , եկամտից տեսուչ Վուսա Վալֆէթի փաշան , արտաքին գործոց պաշտօնատար Բիֆաթ փաշան , մեծ

ժողպետ Էալիլ փաշան , Արաբիոյ բանակին զըլլաւոր զօրապետ Կամիք փաշան , Թեղանթարանին վերատեսուչ Մէհէմէտ Սիլի փաշան , Թաղաւորական տեսանին առաջին թարգման Վալֆէթ էֆէնտին , երկրորդ թարգման Գուսա էֆէնտին , ու Միւսթաֆա էֆէնտին : Աս փառաւոր խրախճանը հրաւիրուած էին ևս Պէյօղուի երեւելի վաճառականները ու պատուաւոր անձինքը . որոնք ներդաշնակաւոր նուագարանաց ձոյնէն հրաւիրեալ սկսան կարաւել : Պարուց հանդէսին վերակացութիւն կը նէին դեսպանատան գործակալներէն երկու հոգի : Աս րոնախաբութիւնը ալ աւելի բերկրութիւլ ու շքեղապանծ եղաւ , Վթիւրմէրի կամին , ու կոմսուհիին ազնուական ու մարդասէր քաղաքավարութեամբը , որով պատուեցին ընկերութիւնը : Կէս զիշեր ըլլալուն պէս նուագարանները դադրեցան , ու ընկերութիւնը ուրիշ մեծ սրահ մը հրաւիրուեցաւ , ուր տեղ բաղմամբա ու փառաւոր ընթրիք մը պատրաստուած էր : Աս մեծաշուք հանդէսը կէս զիշերը իրեք ժամ անցած վերջացաւ :

—Մառմաուայի ընակիչներէն քանի մը հոգի դատախազութիւն ըլլած էին անցածները նոյն կըրդղին հրէաներուն զէմ , Թէ մէկ յոյն տղայ մը դաւաճանութեամբ սպաններ են : Արդարութեան Բարձրագոյն ատեսանը աս դիպուածին վրայ մանրամասն տեղեկութիւններ ստանալով , ու հարկաւոր քըննութիւնները ընելէն ետքը իմացաւ Թէ , չարակամութիւնը ու ատելութիւնը միայն պատճառ եղած են աս զըպարտութեանը : Աստի զատաստանական

Բ Ա Ն Ա Ա Ր Ր Ա Ա Ա Ա Ք

ՅՕ Հ Ա Ն Ն Է Ս Տ Ա Տ Ե Ա Ն

Վ Ա Ռ Օ Դ Ա Պ Ե Տ Ե Վ Ե Հ Ա Փ Ա Ռ Ո Ւ Թ Ե Ա Ն

Ե Պ Տ Ի Ւ Լ Մ Է Ն Ի Տ Ի Ա Ն

Կ Ա Յ Ս Ե Բ Օ Ս Մ Ա Ն Ե Ա Ն Յ . 1

Մեր նպատակը 'ինչպէս որ ջանքերնիս կը յայտնեն , ուրիշ բան չէ , բայց միայն մարդկային ծանօթութիւնները ժողուել , անոնց զանազան սկզբունքները միառօրեալ , ու օգտակար խորձ մը ընել աննոցմով . վերջապէս միտքերնիս զանոնք բաղադրել է (սինթէթիզէ) : Աս ընդարձակ մատուցները միշտ ցրուելու վրայ են , վերջուժութեան շարունակ գործողութեամբը , որ ենթակայէն կը վերացնէ ծանօթութիւնները :

Վերլուծութիւնը , աս ընդարձակ ու վսեմ բոլորին , այսինքն գիտութեան իւրաքանչիւր մասին խորին քննութեանը հարկաւոր եղած օրէնքները ուսուցանելու տակնը , բաղադրութեան իրաւունքները չյափշտակէր , ու

1 Ար յօդուածը Բէլի Միլիթի Տէպնէս ըստած գաղղիական օրագրէն հանուած է , որն որ մօսիւ Վիթթօր Մէօնիէի վերատեսուչութեամբ կը հրատարակուի Փարէզ , ամիսը անգամ մը .

որոնք , վերլուծութեան պէս խիստ աղէկ գրուած ու յայտնապէս որոշած տեղի ունին մարդկային բանական մտաց մէջը :

Վերլուծութեան ու բաղադրութեան անփոփոխ օրինացը հնազանդելու համար , գիտունները անհրաժեշտ պարտաւորութիւն մը զգացին մէկ տեղ ժողվուելու , ու ընկերանալու . ուստի հիմակուան համալսարանները , որոնց իւրաքանչիւր անդամը կաշխատի այնքան եռանդուն ջանքով Վաղղից , Արդիոյ ու Գերմանիոյ մէջ , սեպէ Թէ կենդանի բաղադրութիւններ են գիտութեան զանազան մասայցը :

Ասանկ ընկերութեամբ միջբանած գիտուններէն 'ի զատ , կը զանուին անանկ իմաստուն մարդիկ , որոնք Թէպէտեւ ըստ երեւութին դուրս են ճեմարաններուն շրջանուկէն , այսու ամենայնիւ հազուագիւտ գործունեութեամբ մը , անձնանուէր ջանքով , շնաշխարհիկ համեստութեամբ , զարմանալի սրամտութեամբ , վերջապէս հազուագիւտ յաջողակութեամբ մը գործքի կը դնեն տեսական գիտութիւնը : Ահա ասանկներէն մէկն է Տատեան Հօհաննէս ազան :

Տպագրութիւնը կը պարտաւորի հոգակել սասանկ մարդիկը ու նպաստամտոց ըլլալ երախտագիտութեանը ան ազգին , որուն պատուաւոր ու հաստատուն պաշտ-

պաններն են , ու միանգամայն հաւատարիմ ծառաները : Բազատօճիկ Վառօբապետը Թող չգարմանայ ուրեմն , զինքը հոս յիշատակուած տեսնելով . վստ զի աս պատուաւոր անձին վրայօք պարտաւորով , մեր պարտաւորութիւնը միայն կը կատարենք , որ կը հարկաւորէ մեզի հետազօտել այնպիսիները , որոնք անոր պէս ազնուամիտ զգացողութիւններէ շարժեալ , կը սիրեն գիտութիւնները կաթօգին եռանդով , ու կը մշակեն զանոնք յաջողակութեամբ : Այժմ տեսականին հմուտ գիտուն մը , գործնական իմաստուններ կը ծնանի , կրնանք ըսել փոփոխապէս Թէ գործնականին հետեւողն ալ կը քաջալերէ ու կը ըրացնէ տեսականին հետեւողը :

Տատեան հայկազուն Հօհաննէս ազան , մահտեսի Տատեանին տղան է , որ յաջողաձեռն արհեստներու հետեւելով Կոստանդնուպոլիս , այնքան երեւելի հանդիսացաւ անոնց մէջ , որ Սուլթան Սելիմը ու Սուլթան Մահմուտ ք . պատուեցին զինքը , իրենց մարդասիրական խնամքովը : Գործունեայ ու բարեպաշտ հօր մը դաստիարակութեամբ , Տատեան Հօհաննէս ազան , իր աստուածամախ մօրը կաթին հետ ծծեց ան կրօնական բարոյականութիւնը որ կրնայ կոչուիլ սկզբնական . որով օր մը ոչ միայն իր թագաւորին հաւատարիմ ծառաներէն մէկը պիտի ըլլար , այլև երեւելի , առաքինի մարդոց մէջ : Այժմ

վճռով ազատութիւն շնորհուեցաւ բանտարկեալ
հրէաներուն : Ըս խեղճ մարդոց դէմ եղած դատա-
խազութեան անիրաւութիւնը գիտնալով Անգղիոյ
Վսեմախոյլ դեսպանը , ու մարդասիրական գութ
մը ունենալով անոնց վրայ , բարեհաճեալ էր դես-
պանատան թարգմաններէն մէկը օգնական կարգե-
լու յիշեալ զժբաղդներուն , զերէնք արդարացընե-
լու համար ընելու ընթացքնուն մէջ : Ուստի Վսե-
մախոյլ սրբ Սթրէթֆորտ Վէնկլիկին աս վեհանձ-
նական ու արդարասէր վարորդն էր , անշուշտ մեծ
գովութեան ու մտերիմ երախտագիտութեան ար-
ժանի է :

ԱՐՏԱՔԻԱ ԵՍԻՔԻՔ
ԻՆՊՂԻՒ

Իուլանտայի հանգստութիւնը ու բարեկարգու-
թիւնը հաստատելու համար , Անգղիոյ կառավարու-
թեան ատենակալ իշխանները որոշեցին , կրտսն ,
որ նոյն երկրին փոխարքան Վրէյի կոմսը , իր պաշ-
տօնէն հանեն : Իուլանտայի կառավարութիւնը , որն
որ խիստ դժուարին ու ծանր պաշտօն մըն է , հի-
մակուան պարագաներուն մէջ , Վիշըմօնի դուքսին
յանձնուելու է կրտսն : Անգղիոյ օրագրիները կը
ճանուցանեն թէ աս նոր կարգադրութիւնը , որն որ
գարնան ատենը գործքի պիտի դրուի , Իուլանտայի
հասարակութեան պահանջմանցը թոյլտուութիւն
ու շնորհք մը ընելու համար որոշուած է :

Ռուսիոյ կառավարութեան Ինտրայի դեսպան
մօսիւ տը Պրէօնօվը իր Վեհափառ կայսրէն հրա-
ման ընկալաւ ստորագրելու հունաստանի գործոց
համար հաստատուած դաշնագրութիւնը : Ըս բա-
րեյաջող լուրը երեւելի զիպուած մը կը համարուի ,
որովհետեւ պաշտպան իրեք մեծ տէրութեանցը մէջ
համաձայնութիւնը նորէն հաստատելու օգնական
պիտի ըլլայ :

Դեկտեմբեր 15ին մեծ կռիւ ու խռովութիւն է-
ղաւ Վոլոյվիչ , ծովային զինուորներուն ու թնդա-
նօթածիզ զինուորներուն մէջ : Վոլային զինուոր-

ները քանի մը զինետուններ կողոպտելէն ու կործա-
նելէն ետքը , փորձ փորձեցին բռնութեամբ հանել
կառավարութեան բանտէն իրենց ընկերները , ուր-
տեղ արգելուած էին : Բայց թնդանօթածիզ զօր-
քերը աս բանին դէմ կենալով վաճառեցին յիշեալ
զինուորները . որոնք քիչ մը ատենէն ետքը նորէն
դարձան ալ աւելի բազմութեամբ , ու ճամբան զըտ-
նուած բոլոր զինետունները կողոպտելով ու սօւսա-
լով , ապրիլ ն մեր ընկերները , կորսուիլն պահապան
զօրքերը : Ընմիջապէս հարկաւոր միջոցները գործ-
քի դրուեցան արգելելու համար որ աս խռովարար
մարդերը , բանտին դռները չխորտակին : Ըսոնք նո-
րէն սկսան ծեծկուել թնդանօթածիզ զօրքերուն
հետ , ու աս աղմուկը ինչուան կէս զիշերը երկու
ժամ անցած տեւց : Ընտեսներ ծովային զինուորնե-
րը արունթաթախ ու տրտմալից քաշուեցան դացին
ձմերանոցը , առանց կարող ըլլալու իրենց ուղած-
նին կատարելու :

Գաղղիացոց թագաւորին ազգային երեսփո-
խաններուն ժողովոյն մէջ ըրած ատենաբանութիւ-
նը շատ աղէկ ազդուութիւն մը պատճառեց Անգ-
ղիոյ մէջ . ու ամէն տեսակ առւտրական և ուրիշ
գործքերուն մեծ շարժում մը տուաւ : Անգղիարէն
օրագրիները գրեթէ ամէնքն ալ գովութեամբ յիշա-
տակութիւն կրնեն յիշեալ ատենաբանութեան վը-
րայօք :

Թայմզ անուն օրագիրը հետեւեալ կերպիւ կը
խօսի :

«Մտերիմ վերահաստատութիւնը բարեկամական
կապակցութեանց Գաղղիոյ ու Անգղիոյ մէջ , նմա-
նապէս համամիտ ջանքը աս երկու ազգաց աշխարհ-
քին քաղաքական գործոցը համար , անշուշտ ամէնէն
մեծ ու կարեւոր զիպուած մըն է , օտար տէրու-
թիւններուն հետ մեր յարաբերութեանց հիմակուան
վիճակին մէջ : Ըս զիպուածը , որն որ անկեղծ սըր-
տիւ յայտնեց գաղղիացոց թագաւորը իր ատենա-
բանութեանը մէջ , աներկբայ գլխաւոր աւելի մը
պիտի ըլլայ վիճաբանութեան , Գաղղիոյ ազգային
երեսփոխաններուն ժողովոյն մէջ , թագաւորին տըր-

ւելու պատասխանին (ատրէս) , ու Անգղիոյ խոր-
հրդարանին մէջ :

«Աս երկու երկրին մէջ զուրցուեցաւ արդէն , ու
աներկբայ կրկին պիտի ըսեն , թէ ասանկ բարեկա-
մական վիճակը ուրիշ կերպիւ չատացուեցաւ , բայց
միայն գաղտուկ զանցաւորութիւն ըլլալով երկու կող-
մին պատուոյն ու օգտիցը վրայօք : Ըս յանդիմանու-
թիւնը , որն որ չարամիտ ու տղէտ մարդիկ արդէն
ըրած են ըրտ Վպէրտինին , շատ չքշեր մօսիւ կը
զօյն ալ նորէն ընելու են : Իրաւոր խիստ անտեղի
ու անձուռնի կարծիք է , ո՛վ որ կուզէ պնդել թէ ,
աս երկու կառավարութեանց խորհրդարանները
հարկաւորապէս պէտք է որ իրենց պարտաւորու-
թիւնը ոտքի տակ առնեն , յիշեալ բարեկամական
կապակցութիւնները հաստատ պահելու համար : Ըս
սու ամենայնիւ աս երկու ազգին մէջ զտնուած հա-
կաւակորդները անշուշտ աս անտեղի կարծիքը նո-
րէն յիշելու են քաղաքական ժողովներուն մէջ » :

ԳՆՊՂԻՒ

Ազգային երեսփոխաններուն ժողովը զեկտեմբեր
17ին իր նախագահին փոխանորդները կարգեց , ու
րոնք չորս հոգի են , այսինքն Մէսիէօ Պիլնօն , Լը-
բըէթիէ Տօնէյ , տը Պրէյյոմ , ու տը Սալվանտի :
Հետեւեալօրը ևս յիշեալ ժողովը , իր չորս քար-
տուղարը որոշեց , որոնք են Մէսիէօ տը Լըբըէ ,
Լաբրօս , Լաքըաս ու Պուասի Գանկլաս : Ըսոնք
ամէն ալ խաղաղասէր ու կառավարութեան կող-
մնապահ անձինք են , միայն քարտուղարներէն մէկը
հակառակ կողմէն է :

Ազգային երեսփոխաններուն ընտրութեամբ ինը
հոգաբարձու անուանեցան , որ թագաւորին ըրած
ատենաբանութեան պատասխանը պատրաստեն , որ
ետքը ըստ սովորութեան քննութիւն ըլլալով , Վո-
րին Վեհափառութեանը պիտի մատուցանեն :

Դեկտեմբեր 31ին իրիւրունը , նոր տարին շնոր-
հաւորելու համար Վարէզու պահապան զօրաց ամէն
խումբերուն երաժիշտները Վիւլեթի արքայական

հայերէնը սովեցաւ , ան լեզուն՝ որուն սքանչելի գրակա-
նութիւնը տակաւին խիստ քիչ ծանօթ է Արոպիոյ մէջ :
Հայագի բանաստեղծները իբրու թէ աստուածաշունչ
ազգեցութենէ շարժեալ , հինաւորց եռանգով վա-
ռուած են , ու սուրբ Վրիգոր Վասուրիչը Հայաստանու ,
քրիստոնէութիւնը տարածող երեւելի ու իմաստուն սուր-
բերէն մէկն է :

Մայրենի լեզուն ուսմունքին մէջ , հատեան հօհան-
նէս աղան բաւական յառաջադիմութիւն ըրաւ , ու ետքը
փիլիսոփայութեան վրայօք պարապեցաւ , բայց չէ թէ
ան խորամանկ նրբամտութեան արհեստին , որ աս անունը
կը յափշտակե տղայական դիւրութիւն մը ստանալու հա-
մար ամէն բանի վրայօք խօսելու , ամէն բանը վիճաբա-
նութեան տակ ձգել , ճշմարտութեան առաջին հիմը , այ-
սինքն խոհական դատողութիւնը խանգարելով : Հայոց
գրականութիւնը խիստ փափուկ ու հանձարաւոր է , ներ-
դաշնակաւոր ձեւերով զարգարուած , որոնք աղէկ բանը
սիրելի կրնեն ու գէշը ատել կուտան : Ըս լեզուն բա-
ռերը ան որոշիչ յատկութիւնը ունին , որ զիւրին ու
քաղցրաձայն են , երբոր աղւոր ու աղիւ բան մը կընշա-
ծակեն , ու ասոր հակառակը գէշ բաներ նշանակիչ բա-
ռերը դժուարին ու խիստ են :

Տաճկի առակաները խիստ փիլիսոփայական են , զորոնք

ամէնը մէկ տեղ բերելով , խոհեմութեան վճռական
առածներ ըսել են : Վ՛վ գուք , որ արեւելքը կարճա-
մարհէք , կարդացէք զանոնք , ու անոնց հետեւելու ջա-
նացէք :

Տաճկերէն լեզուով կարգաւոր ու մանաւանդ գրելը շատ
դժուար ըլլալուն , քիչ մարդիկ զանիկա սովորելու կը հե-
տեւին . բայց հատեան հօհաննէս աղան աղէկ կը խօսի
նոյն լեզուն ու կը գրէ ալ : Կաւ թուաբանութեան ու
երկրաչափութեան մէջ բաւական յառաջադիմութիւն ը-
րաւ , զորոնք սովեցաւ ան յաջողութեամբ , որ հնարաւոր
էր անանկ մէկ երկրի մը մէջ , ուր տեղ տակաւին գիտու-
թիւնները իրենց արժանապար աստիճանին հասած չեն ,
բայց ետքը իր բնական հանձարով , աս տղատական ար-
հեստներուն վրայօք ալ աւելի տեղեկութիւններ ստա-
նալով , աս օրուան օրս խիստ զօրաւոր է մաթեմատի-
գայի մէջ : Ասեցինք թէ անանկ շափաբերական խնդր-
ներ ենթադրեր ու լուծեր է , զորոնք չեն կրնար բանի
տեղ չընել նաև մեր երեւելի գիտունները շափաբերու-
թեան :

Սուլթան Մահմուտ Է , որ քաջ կը ճանաչէր ամէն մէ-
կուն արժանաւորութիւնը , և որուն վեհանձնական հա-
կամտութիւնը յայտնի է տաճկաստանին մէջ բարեկըր-
թութիւնը տարածել տալու համար , հաճեցաւ հատեան

հօհաննէս աղային յանձնելու վառօդապետութեան
երեւելի պաշտօնը : Ե)

Հօհաննէս աղան ասանկ մեծագոր ինքնակալի մը մար-
դասիրական շնորհքը ընդունելով՝ ալ աւելի վերջին
ձգամբ աշխատեցաւ նոյն շնորհքին արժանի ըլլալու հա-
մար ըստ ամենայն մասին . ուստի 1835ին փութացաւ
Գաղղիա երթալու , ուրտեղ Մօսիւ կօթիէ տը Վոլպ-
րիին գործունեայ ու իմաստուն առաջնորդութեամբ ,
քանի մը ամսուան միջոցին (որուն ամէն մէկ օրը տանը-
հինգ ժամ աշխատութիւն հաշուելու է) , քիլիականու-
թեան ու անոր գործադրութեանց մէջ , այնքան մեծ ու
շուտ յառաջադիմութիւն ըրաւ , որ զարմացման արժանի
կը ըլլայ , եթէ հատեան Հօհաննէս աղային խիստ հան-
ձարամիտ ըլլալը չգիտնայինք , ու ընդհանրապէս բոլոր
արեւելիներուն սքանչելի յաջողակութիւնը , և մասնա-
ւորապէս հայոց ազգին , արտաքոյ կարգի ընդունակու-

1) Աս պաշտօնին մասնակից է նաև Հօհաննէս աղային եղբոր
որդին հատեան Պօղոս աղան , որ մեծ պատիւ ու համարուած
ստացած է Կոստանդնուպօլիս : Աս երկու գլխաւոր պաշտօնատա-
րաց բաւական օգնութիւն կրնէ հատեան աղայ Աւաքէլ Միսիկը
որ ատեն մը առաջին թարգման էր Օսմանեան դեսպանատան
Փարիզու , ուրտեղ սովեցաւ վառօդապետութեան վերաբերեալ
գիտութիւնները :

պալատին պատուհաններուն առջին գացին. ուրտեղ
պատիւ թաղաւորական գերդաստանին, քանի մը
ներդաշնակաւոր եղանակներ նուազեցին :

Հետեւեալօրը յունվար 1ին, տէրութեան քաղա-
քական ու զինուորական երևելի պաշտօնատարները
ևս պատիւ ունեցան, Նորին Վեհափառութեանը
ներկայանալով իրենց բարեմաղթութիւնները մա-
տուցանել :

Հռոմայու նուիրակը ևս, օտար տէրութեանց ա-
մէն դեսպաններուն կողմանէ հետեւեալ ատենաբա-
նութիւնը ըրաւ թաղաւորին :

Վեհափառ Տէր :

«Իեսպանաց ժողովը, իրենց ինքնակալներուն
զգացողութիւններէն շարժեալ, չէ թէ միայն իր բա-
րեմաղթութիւնները, այլև իր մտերիմ խնդակցու-
թիւնը կրփութայ մատուցանել ձեր Վեհափառու-
թեանը, նոր տարւոյն հանդիսաւոր աւելիմ մէջ :

«Խաղաղութիւնը, որուն հաստատութեանը հա-
մար ձեր Վեհափառութիւնը մարդասիրական ջան-
քով անդադար ինամբ ունեցաւ ուրիշ տէրութեանց
հետ միաբանութեամբ, օրէ օր իր շնորհքը ալ աւելի
կրտարածէ միշտ :

«Հաւատքը, հասարակաց բարեկարգութիւնը,
որոնք աղբիւր են ամէն ազգաց բարեբաղդութեանը
արդէն անդորրութիւնը ու յաջողութիւնը կրմատա-
կարարեն Վաղղիոյ ու Լաւրոպիոյ :

«Լս բարեբաղդութիւնները, ամէնէն քաղցը
վարձատրութիւններն են ձեր Վեհափառութեանը
համար : Ենոնց յարատեւութիւնը ու յաւաքաղի-
մութիւնները անգամ, ապահովութիւն կըզմանան
ձեր Վեհափառութեանը և ուրիշ ամէն ինքնակա-
լաց բարձր խոհմութեանէ, անոնց խորհրդարան-
ներուն համաձայնութեան ու ժողովրդոցը օգտէն :

Հաճեցի վերին Վախանանութիւնը շարունակել
ձեր Վեհափառութեանը իր երկնային օգնութիւնը :

«Ինչպէս որ արքայական ակտուոյն վրայ նոյնպէս
ալ ձեր Վեհափառութիւնը իր օգոստափառ գեր-
դաստանին մէջ, միտթարական հաճութիւն ստացած
է : Նոր ու բարեյաջող ամուսնութիւն մը, որ ձեր
թիւնը հասարակ բան մը եղած չըլլար : Ես գիտութիւն-
ներէն իրեն բաւական պաշար առնելով, ու Ենգլիան և
հոն տեղի գլխաւոր գործատուները պարտէն ետքը,
յիշեալ Վառօդակեանը դարձաւ Կոստանդնուպոլիս, ուր-
տեղ վառօդի գործատուներ կարգի դրաւ, մի և նոյն բա-
րեկարգութեամբ, որով հաստատուած են Վաղղիոյ ու
Լաւրոպիոյ վառօդարանները : Ես արհեստին տեղեակ
մարդիկ Վաղղիոյի մէջ յատկապէս փորձեր ընե-
լով, տեսան որ խիստ գերազանց է Տաճկաստան շին-
ւած վառօդը : Ենտեանը Սուլթան Վահանուրը իր բա-
րեհաճութեան նոր ապացոյցներով պատուեց յիշեալ
պաշտօնատարը, ու շնորհեց անոր իմթիա ըսուած նշանը
որ քիչ մարդոց կըտրուի, ու մեծ յարգութեան ապացոյց
մըն է :

Ես բարեբաղդութիւններէն իր սիրտը հպարտութիւն
մը չեբերէն 'ի դատ, Տատեան Յօհաննէս աղան իր
բարեխախտ ջանքը անդադար կըշարունակէր, ալ ա-
ւելի պարկեշտ վարմունքով ու գործունէութեամբ : Բո-
լորովին անձնանուէր ըլլալով իր Ինքնակալին, անխոնջ
ջանիւ կաշխատէր զինքը ալ աւելի օգտակար ընելու
փրօցներուն վրայօք, ծաղկեցնելով ձեռագործ ար-
հեստները, որոնցմէ առաջ կուգան ամէն ազգաց բարե-
բաղդութիւնները : Կըմտածէր թէ ինչպէս կրնար հաս-

Վեհափառութեան հայրական սրտին խիստ սիրելի
է, թաղաւորական գերդաստանին անգամները ու ա-
ռաքինութիւնները պիտի աւելցնէ :

«Երկնային օրհնութիւնը անպակաս պիտ'որ ըլլայ
անոր վրայէն. որուն մէջ՝ ձեր Վեհափառութիւնը
հանգիստ ու երկար օրեր պիտի անցնէ :

«Իեսպանաց ժողովը ջերմեանդ սրտիւ կըցան-
կայ զան, ու կըյուսայ ամենայն վստահութեամբ :
Բարեհաճեալք, Վեհափառ Տէր, ընդունել անոր
բարեմաղթութիւնները ու խնդակցութիւնը, նմա-
նապէս իր մտերիմ ու խորին ակնածութիւնը» :

Թագաւորն ալ հետեւեալ կերպիւ պատասխանեց :

«Խիստ հաճելի է ինձի համար նորէն լսել ինք-
նակալներուն կողմանէ, որոնց փոխանորդ է իմ բով
դեսպանաց ժողովը, ան մտերմական զգացողութիւն-
ները, որոնք հիմայ յայտնեցիք : Ուրախ սրտիւ կը
տեսնեմ, որ օրէ օր ալ աւելի կըհաստատուի համա-
ձայնութիւնը ամէն արքայական խորհրդարաններուն
մէջ, խաղաղութեան հաստատ մնալուն համար : Ե-
մէն տարի որ կանցնի, նոր ապահովութիւններ կը
բերէ մեզի ապաւնի բարեբաղդութեանց համար,
որով կըպարտաւորէ զմեզ նոր գոհաբանութիւններ
մատուցանել Վերին Վախանանութեանը, անոր
մարդասիրական շնորհացը համար, որ կըվայելէնք :
Յոյսս մեծ է որ նոր տարիին մէջ պիտի կատարուին
ձեր մտերիմ բարեմաղթութիւնները. որոնց համար
մեծ շնորհակալութիւն ունիմ, նաև թագուհին ու
բոլոր ընտանեացս կողմանէ :

«Ելլե շնորհակալ ենք դեսպանաց ժողովէն, իր
խնդակցութեանը համար, իմ տղուս Դօնիլի
իշխանին ամուսնութեանը վրայ. ու ակն ունիմ որ
Բարձրեալն Վստուած, աս միաւորութեանը վրայ՝
որ ամենասիրելի է իմ սրտիս, պիտի հովանի ընէ
ան օրհնութիւնները, որ ջերմեանդ սրտիւ մաղթե-
ցիք անոր համար» :

Սուիւ Տօնօզը Վօրթէզ, Սպանիայի տղային
ժողովուն անդամը, ու Բօզտը () լմնօ ընդհանուր
ղորակետը (որ արտաքոյ կարգի գործով մը Մարի
Վրիտտին թագուհին քովը եկած էր,) իրենց

տատել Տաճկաստանի մէջ պիտանի գործատուներ, ո-
րոնց արտադրութիւնները այնքան ծանր գիներով ծա-
խու կառնուին օտար երկիրներէն : Բայց Սուլթան Վահ-
անուտին տարազէ պ մահը, ատեն չթողուց որ օգուտ քա-
ղէ իր հաւատարիմ ծառային գործունէայ ու բարեխա-
խան յաջողակութիւնէն : Տատեան Յօհաննէս աղան,
Տէրութեան բոլոր հպատակներուն հետ անմիտթար
սրտիւ ցաւեցաւ աս Ինքնակալին մահուանը վրայ :

Ինչպէս որ Վրանսուա ւն որ վերանորոգող եղաւ մեր
մէջը գիտութեանց ու արհեստից, իրմէ ետքը աղուոր
բաներուն ակորժը ու սերը թողուց, որն որ իր հպա-
տակներուն սրտին մէջ ազգեր էր, ասանկ ալ Սուլթան
Վահանուրը, տէրութեան ժառանգութիւնը իր ծաղկա-
հասակ որդոյն ձգելով, անոր թողուց նաև իր վեհանա-
նական զգացողութիւնները, ու իր գերազանց խորհուրդ-
ները. ուստի Վպտիւլ Մէճիտ Խանը իր իմաստուն
խորհրդականներուն հետ, օգոստափառ Զօրը մեծագոր-
ծութեանը հետամուտ եղած է :

Կորահասակ Վեհափառ Սուլթանը որոշեց թէ պէտք է
որ հաստատուին Լաւրոպիոյ գործատուներ իր շնախաբ-
հիկ մայրաքաղաքին չորս կողմը. ու աս պատճառաւ հը-
րաման ըրաւ Տատեան Յօհաննէս աղային, որ գայ Լա-
րոպիա, նայի և քննէ Վաղղիոյ ու Լաւրոպիոյ գործողու-

պաշտօնը լընցուցին : Կըհաստատեն թէ, թագու-
հին խօսք տուեր է, իր աղջիկին Իղապէլ թէ թա-
ղուհին ու անոր ատենակալ իշխանաց ժողովոյն
խնդիրը կատարել, ու փետրվարի առջ օրերը
ճամբայ ելելու է Մատրիտ երթալու :

Սուիւ Վրիտտը մեծ հացկերոյթ մը ըրաւ. աս օ-
րերս իր երևելի քաղաքական բարեկամներուն, ուր
տեղ սեղանակից էին երկու իրեք փարիներ Վաղ-
ղիոյ ու զրեթէ յիսուն ազգային երեսփոխաններ :

ՊԼՎԻԻՒՆ

Միւսիք, 15 Գեկտեմբեր :

Վեհափառ արքան երէկ առտու քանի մը ժամ
տեսութիւն ըրաւ Բարձրապատիւ Վալէրսթէնի
իշխանին հետ, որ շատ ատեն չէ փարեղէն ու Լմնօ-
րայէն դարձաւ. ուրտեղ մասնաւոր պաշտօնով մը
զացեր էր : Կէս օրէն ետքը ևս յիշեալ իշխանին,
ու արտաքին գործոց պաշտօնատար Պարոն տը Ժի-
զին հետ երկար ատեն խորհուրդ ունեցաւ : Ես
առտու արտաքին գործոց պաշտօնատարը խիստ
կանուխ այցելութեան զնայ Վալէրսթէնի իշխանին
ու քանի մը ժամ անոր քովը կեցաւ : Ինչհամարապէս
կըհաստատեն թէ աս իշխանը մօտ օրերս ճամբայ
ելելու է Լթէք երթալու համար :

ՔԱՆԱՔԱՆ ԵՆԻՔԻՔ

Օմբուսիա, 21 Յունվար :

Եմուս 16ին կիրակի օրը հանդիսաւոր մեծ պաշ-
տօն կատարուեցաւ քաղաքիս սուրբ Ստեփաննոս ե-
կեղեցիին մէջ, վասն հանգստեան հողոյ Վսեմա-
փայլ Պօղոս Պէյին Լէքքսանդրիոյ : Կերպատիւ
Մատթէոս սրբաղան Ըրք Լպիսկոպոսը յատուկ
պատարագ մատոյց ըստ ինդրոյ քաջատոհմիկ Լու-
սուֆեան Տոլսէփի աղային, բեռորդոյն հանգու-
յեալ Պէյին : Բաղմաթիւ ժողովուրդը արք և կա-
նայք ներկայ գտնուեցան ինչուան վերջը աս փառա-
ւոր և բաղմաճախ պաշտօնին, ջերմեանդութեամբ

թիւնները, ու ընտրութիւն ընելով, ծախու առնէ գա-
նազան մեքենաներ : Իր բարեգութ Ըրքային հրամանը
ընդունելուն պէս ամենէն տարակցս մը չունեցաւ
հայրենիքը թող տալու, իր ամենասիրելի ու բաղմաթիւ
գերդաստանը, իր արժանաւոր կողակիցը, որ մի և նոյն
արիասիրտ ոգով վառուած է. որուն մայրական գորո-
վանքէն հեռացուց իր զաւկներէն երկուքը, Կերսէս
Խոսրով աղան, ու Հարութիւն Վարեգին աղան : 1842
նոյնմբեր 8-20ին մեծապատիւ Վառօդակեանը, իր եր-
կու տղուն հետ փարեզ եկաւ. ուսկից սնմիջապէս Ենգ-
ղիա անցաւ, հետը առնելով իր 18 տարեկան տղան
Կերսէս աղան. որուն համար որոշուած էր որ մեքենա-
գործութեան արհեստին հետեւի : Եսկիա բաւական յա-
ռաջագիմութիւն ըրաւ աս արհեստին մէջ, ու մեծ օգուտ
քաղեց ան դասերէն, որ ընկալաւ Մէնջըստեր մաթէմա-
թիգայի վարժապետէ մը. ու միանգամայն անխոնջ
ջանիւ հետեւեցաւ փորձերու համարներուն գլխաւոր մե-
քենայագործի մը, մօսիւ Վերպէրն անուն : Հարութիւն
Վարեգին աղան, փարիզու ճեմարանին պաշտօնատար
(օֆիսիէ) մօսիւ Ժիլէ Տամիթին խնամոցը յանձնուե-
ցաւ, որ խիստ ծանուցեալ է միտթիք ըսուած իր
գործքերովը, որոնց աշխատակից եղած են նաև մօսիւ
(Սայլեթեր, յիշեալ ճեմարանին վերակացուն, ու Տօք-

